

ԾՈՎԻՆԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո»
ՊՈԱԿ-ի հոգեբանական փորձաքննությունների
բաժնի փորձագետ



**ՍԵՌԱԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ
ԱՆՉԱՓԱՀԱՄՆԵՐԻ ԴԱՏԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Սույն գիտական հոդվածում անդրադարձ է կատարվել անչափահասների նկատմամբ կատարված սեռական բռնության դեմ պայքարի արդիականությանը, այս գործերով դատահոգեբանական փորձաքննության առանձնահատկություններին, իրավական տեսանկյունից դրա նշանակալիությանը, անդրադարձ է կատարվել «անօգնական վիճակի» իրավական սահմանմանը, քննարկվել է հոգեբան փորձագետի իրավասության սահմանները: Այնուհետև անդրադարձ է կատարվել հոգեբանական տեսանկյունից կարևոր դիմադրություն ցույց տալու կարողության բաղադրիչներին, վերլուծության են ենթարկվել սեռական գործողության բնույթն ու նշանակությունը հասկանալու մակարդակները, տարիքային առանձնահատկություններով պայմանավորված դրսևորման ձևերը: Անդրադարձ է կատարվել նաև սեռական բռնության ենթարկված անչափահասների անհատական-հոգեբանական առանձնահատկություններին, դատախարակության խնդիրներին, դատահոգեբանական փորձաքննության պրակտիկայից բերվել է օրինակ:

Հիմնաբառեր- դատահոգեբանական փորձաքննություն, սեռական բռնություն, անչափահասներ, անօգնական վիճակ, դիմադրություն ցույց տալու կարողություն, կատարվածի բնույթն ու նշանակությունը հասկանալու կարողություն:

Սույն հոդվածը վերբերում է անչափահասների նկատմամբ իրականացված դատահոգեբանական փորձաքննություններին, մասնավորապես, այն դեպքերում, երբ անչափահասները ենթարկվում են սեռական բռնության: Հոդվածում անդրադարձ է կատարվում այնպիսի հարցերի, ինչպիսիք են անչափահասության տարիքի հոգեբանական առանձնահատկությունները, բռնությամբ կատարված սեռական բնույթի հանցագործությունները, դատահոգեբանական փորձաքննությունների անցկացման առանձնահատկությունները անչափահասների նկատմամբ, որոնք ենթարկվել են սեռական բռնության:

Անչափահաս տուժողների տարիքային առանձնահատկությամբ պայմանավորված անհատությունը, ներշնչվողականությունը, մեծին որպես հեղինակություն ընդունելը և անվերապահ ենթարկվելը, կյանքի փորձի ոչ բավարար լինելը, սեռական հարցերից անտեղյակությունը, անկարողությունն ամբողջապես և քննադատորեն վերլուծել ստեղծված իրավիճակը և կանխատեսել այլ մարդկանց գործողությունները բարձրացնում են անչափահասների սեռական բռնության գոհ դառնալու հավանականությունը:

Այս տեսակ հանցագործությունների դեմ պայքարի առաջին և ամենակարևոր քայլը պետական մակարդակով խնդրի կարևորության գիտակցումը և դրա դեմ պայքարի արդիականության բարձրա-

ձայնումն է: Խնդրի լրջությունը և արդիականությունը գիտակցելով՝ 2013թ. դեկտեմբերի 21-ին ուժի մեջ մտած քրեական օրենսգրքի փոփոխություններով էապես խստացվել է անչափահասների նկատմամբ իրականացվող սեռական հանցագործությունների համար նախատեսված պատժաչափը, որը կարծես դարձավ այն տեսակ հանցագործությունների նվազմանը նպաստող գործոններից մեկը, սակայն շոշափելի արդյունքեր ունենալու համար հարկավոր է խնդրին բազմակողմանի մոտեցում և դրա դեմ պայքարի նորանոր կառույցների ընդգրկում:

Անչափահասների սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների բացահայտման, կանխարգելման, պատճառների վերհանման և դրա դեմ պայքարի բավականին արդյունավետ միջոց կարող է հանդիսանալ նաև դատահոգեբանական փորձաքննությունը, որն արդարադատության իրականացման լրացուցիչ գործոն է հանդիսանում: Դատահոգեբանական փորձաքննությունները հնարավորություն են տալիս բազմակողմանի ուսումնասիրել և գիտականորեն պատճառահետևանքային կապեր վեր հանել անձի, վարքի, միջավայրի պայմանների միջև: Սեռական բռնության ենթարկված անձանց դատահոգեբանական փորձաքննությունների հիմնական խնդիրն անօգնական վիճակի որակման հարցում իրավապահ մարմիններին

www.journal.lawinstitute.am

մասնագիտական գիտելիքի տրամադրումն է: Բռնաբարության և բռնի սեռական բնույթի գործողությունների ամենակարևոր չափորոշիչը մեղադրյալի կողմից տուժողի անօգնական վիճակի օգտագործումն է: Իրավապահ և դատական մարմինների կողմից անօգնական վիճակի որակումը որոշ դեպքերում դժվարանում է նրանով, որ պասսիվ վարքը, տուժողի վարքում դիմադրելու բացակայությունը կարող են մի դեպքում սեռական կապի մեջ մտնելու համաձայնության նշան դիտվել, իսկ մյուս դեպքում՝ պարզապես անօգնական վիճակ: Այդ պատճառով տուժողի՝ իր նկատմամբ կատարվող գործողությունների բնույթն ու նշանակությունը հասկանալու և դիմադրություն ցույց տալու կարողությունը պարզելու համար, անհրաժեշտություն է առաջանում դիմել դատահոգեբանական փորձաքննության օգնությանը:

ՀՀ քր. Օր. 138.4 հոդվածը սահմանում է, որ անօգնական վիճակում գտնվող է համարվում այն անձը, որը որոշակի հանգամանքների ուժով մշտապես կամ ժամանակավորապես զրկված է եղել հանցավորին դիմադրություն ցույց տալու կամ իր նկատմամբ կատարվող արարքի բնույթը գիտակցելու կամ հասկանալու հնարավորությունից, ինչպես նաև 12 տարին չլրացած անձը¹: Ինչպես տեսանք, իրավական սահմանման մեջ անօգնական վիճակը փաստող ամենակարևոր բաղադրիչներից է դիմադրություն ցույց տալու անկարողությունը և իր հետ կատարվող գործողությունների բնույթն ու նշանակությունը չհասկանալը: Դիմադրություն ցույց տալու կամ կատարվող արարքի բնույթը չգիտակցելու տուժողի անկարողությունը մնան դեպքերում կարող է պայմանավորված լինել նրա որոշակի ֆիզիկական կամ հոգեկան առանձնահատկություններով: Յա.Յակովլևն առանձնացնում է անօգնական վիճակի երկու տեսակ՝ ֆիզիկապես անօգնական վիճակ և հոգեպես անօգնական վիճակ: Տուժողը համարվում է ֆիզիկապես անօգնական վիճակում գտնվող, երբ գիտակցում է իր հետ տեղի ունեցող գործողությունների սեքսուալ բնույթը և ցանկանում է հետ մղել դրանք, բայց ի վիճակի չի լինում դիմադրել հանցավորին՝ իր ֆիզիկական թերությունների (օրինակ՝ կուրություն, ֆիզիկական այլ արատներ և այլն) կամ հիվանդության հետևանքով խիստ հյուծված լինելու և նման այլ պատճառներով: Տուժողը համարվում է հոգեպես անօգնական վիճակում գտնվող, երբ հանցավորի գործողությունների բնույթն ու նշանակությունը չգիտակցելու կամ չզգալու հետևանքով չի գիտակցում դիմադրելու անհրաժեշտությունն ու, հետևապես, զրկված է լինում նաև պաշտպանա-

կան գործողությունների դիմելու կարողությունից²: Հնարավոր են դեպքեր, երբ տուժողն ունի այնպիսի անձնային գծեր և գտնվում է այնպիսի հոգեվիճակում, որ, հասկանալով իր նկատմամբ կատարվող գործողությունների բնույթն ու նշանակությունը, չի կարողանում դիմադրություն ցույց տալ:

Հարկ է նշել, որ անօգնական վիճակն իրավաբանական հասկացություն է և կարող է որակվել միայն քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից: Հոգեբան-փորձագետը կարող է միայն գնահատել փորձաքննվողի՝ հոգեպես անօգնական վիճակում գտնվելու հանգամանքը և միայն այն դեպքերում, երբ հոգեպես անօգնականությունը պայմանավորված չէ հոգեկան հիվանդությամբ: Այդ պատճառով անօգնական վիճակի սահմանումն ավելի հիմնավոր դարձնելու և այս երևույթը բազմակողմանի ուսումնասիրելու նպատակով քրեական վարույթն իրականացնող մամինը կարող է նշանակել նաև դատաբժշկական և դատահոգեբուժական փորձաքննություններ:

Ինչպես տեսանք, «անօգնական վիճակի» իրավական չափորոշիչի հոգեբանական բնորոշման՝ դիմադրություն ցույց տալու կարողության ամենակարևոր գործոններից է կատարվող գործողությունների բնույթն ու նշանակությունը հասկանալու ուսումնասիրությունը: Տուժողի՝ իր նկատմամբ կատարվող գործողությունների բնույթը հասկանալը նշանակում է, որ փորձաքննվողի հոգեկան զարգացման մակարդակը թույլ է տալիս, որ վերջինս տեղեկություններ ունենա կնոջ և տղամարդու միջև սեռական հարաբերության էության, դրա արտահայտման ձևերի, սեքսուալ հարաբերությունների ֆիզիոլոգիական կողմերի վերաբերյալ, ընկալի դրա հասարակական նշանակությունը: Տուժողի կողմից իր նկատմամբ կատարվող գործողությունների նշանակությունը հասկանալը նշանակում է, որ վերջինս կոնկրետ իրավիճակում կռահի հանցավորի իրական նպատակները, գնահատի իրավիճակի հնարավոր զարգացումները և այդ իրավիճակում ցուցաբերի ադեկվատ վարք:

Հոգեբանական գրականության մեջ գոյություն ունի տուժողի կողմից իր հետ կատարվող սեռական բնույթի գործողությունների բնույթն ու նշանակությունը հասկանալու 4 մակարդակ.

1-ին մակարդակ- իրավական կարևորություն ունեցող իրավիճակում տեղի ունեցող իրադարձությունների արտաքին կողմի հասկացում /ժամը, տեղը, օրինազանցի արտաքին տեսքը, կատարված գործողությունների հաջորդականությունը և այլն/:

2-րդ մակարդակ- դրանց ներքին բովանդակության հասկացում՝ սեռական հարաբերությունների

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կենսաբանական էության հասկացում /սեռական կյանքի վերաբերյալ բավարար ընդհանուր-կենցաղային պատկերացում/:

3-րդ մակարդակ- քրեական իրադարձությունների հասարակական նշանակության հասկացում՝ հանցագործության բարոյա-էթնիկական նշանակության, անձի պատվի, արժանապատվության համար դրա հետևանքների իմաստավորման կարողություն:

4-րդ մակարդակ- անձնային իմաստավորման մակարդակում քրեական իրադարձությունների հասարակական նշանակության հասկացում³:

Սակայն պետք է հաշվի առնել, որ ոչ միշտ է պետք որակել որպես անօգնական վիճակ, եթե տուժողն այդ իրադարձությունը չի ընկալում որպես իր հետ կատարված սարսափելի դեպք, որը մեծ ազդեցություն կունենա իր ապագայի վրա: Այս հարցի շուրջ Ա.Ա.Ռեանն առաջարկում է խնդրի երկու կողմի տարբերակում.

- Սոցիալ-բարոյական նորմերի իմացում, որն առկա է սեքսուալ հարաբերություններում,
- Փորձաքննվողի կողմից այդ նորմերի ընդունում:⁴

Իր նկատմամբ կատարվող գործողությունների բնույթն ու նշանակությունը գիտակցելու անկարողության և դիմադրություն ցույց տալու բացակայության հիմնական գործոններից է տուժողի մանկահասակությունը: Երեխայի կողմից իր սեռի գիտակցումը տեղի է ունենում մոտ 3-7 տարեկանում. 3-4 տարեկան երեխաները կարող են տարբերակել շրջապատող մարդկանց՝ կախված արտաքին տեսքից, հագուստից, մարմնի կազմվածքից, ձայնից: 4-7 տարեկանում երեխաները սկսում են հետաքրքրություն դրսևորել երեխաների ծնվելու, ամուսնական կյանքի նկատմամբ, խաղում են սեքսուալ էլեմենտներ պարունակող խաղեր (ընտանիք, բժիշկ), որոնք կարող են ուղեկցվել հագուստները հանելով և միմյանց սեռական օրգանների դիտումով: Այս տարիքում երեխաները կարող են գնահատել քրեածին իրավիճակի միայն արտաքին, իրադարձությունների ֆորմալ կողմը, ընկալել այն որպես խաղ կամ պատիժ՝ 7-13 տարեկանում ֆիզիոլոգիական առանձնահատկությունների և սեռական վարքի կանացի և տղամարդկային ստերեոտիպերի ընկալման հիման վրա ձևավորվում է երեխայի սեռական վարքը՝ Ս.Ս. Շիպչինը նշում է, որ եթե փորձաքննությունը նշանակվում է փորձաքննվողների նկատմամբ, որոնց 8 տարեկանը դեռ չի լրացել, իմաստ չկա հարցադրում անել բռնարարի գործողությունների բնույթն ու նշանակությունը հասկանալու կարողության և դիմադրություն ցուցաբերելու

համար տուժողի ընդունակությունն աղեկվատ ընկալել գործի իրադարձությունները հիշելը և ճիշտ ցուցմունք տալը: Փորձաքննվողը կարող է ըմբռնել միայն իրավաբանորեն նշանակություն ունեցող իրադարձությունների արտաքին կողմը, իսկ կենսաբանականը և սոցիալականը՝ ոչ: 10 տարեկանից ցածր տարիքի հոգեպես առողջ տուժողների անընդունակ լինելը՝ ըմբռնելու իրենց հետ կատարվող գործողությունների նշանակությունը, բնական է: Այս տարիքում ինտելեկտուալ զարգացման ցածր մակարդակը պայմանավորված է տարիքային անհասունությամբ: Նույնիսկ ինտելեկտի բարձր մակարդակ հաստատելու դեպքում մանկահասակ տուժողների մոտ սեքսուալ գիտակցության թերձակվորումը դժվարացնում է եզրակացություն տալը նրանց ընդունակության մասին՝ լիարժեք ձևով գիտակցելու հանցագործի գործողությունների բնույթն ու նշանակությունը: Սեռական բռնության ենթարկված մանկահասակ տուժողների դատահոգեբանական փորձաքննության լիարժեք իրականացումը դժվարանում է նրանով, որ երեխաները կամ իրենց տարիքով պայմանավորված՝ դեռ չեն հասկանում սեռական գործողության բնույթն ու նշանակությունը, կամ չեն ունենում բավականաչափ բառապաշար, որպեսզի նկարագրեն իրենց հետ տեղի ունեցած գործողությունները: Արդեն մոտ տասը տարեկանից բարձր անձանց մոտ այդ հարցը հարկ է լինում պարզել մասնագիտորեն՝ մանրակրկիտ հետազոտելով նրանց իմացական գործընթացների անհատական կառուցվածքը և անձնային հասունության մակարդակը: Կարևոր է ուսումնասիրել սեռի վերաբերյալ փորձաքննվողի յուրահատուկ գիտելիքները, ինչպես նաև վերջինիս սեքսուալ գիտակցության և ինքնագիտակցության մակարդակը: Փորձաքննության ընթացքում առավել մեծ ուշադրություն է դարձվում այն հարցերին, որոնցով հնարավոր է լինում պարզել՝ ի վիճակի⁵ է փորձաքննվողը ճիշտ գնահատել սեքսուալ գործողությունների բնույթն ու հասկանալ դրանց նշանակությունը, որքանով է նա տեղեկացված սեռական հարցերի, մասնավորապես սեռական փոխհարաբերության էության, դրա արտահայտման ձևերի, սեքսուալ հարաբերությունների ֆիզիոլոգիական կողմերի, մանկածնության, ինչպես նաև սեռական հարաբերության մեջ մտնելու ընդունելի տարիքի մասին:

Դատահոգեբանական փորձաքննության գործընթացում, սակայն, հանդիպում են դեպքեր, երբ փորձաքննվողը, լիովին ըմբռնելով հանցավորի գործողությունների իմաստը, անկարող է լինում դիմադրել, ինչն առաջին հերթին կախված է նրա ան-

www.journal.lawinstitute.am

հատական հոգեբանական առանձնահատկությունների կառուցվածքից: Ընդ որում, որքան մեծ է փորձաքննվողի տարիքը, այնքան ավելի մեծ կարևորություն է տրվում նրա անհատական հոգեբանական առանձնահատկություններին և կոնկրետ իրավիճակում տուժողի վարքի վրա դրանց ազդեցությանը: Դատահոգեբանական փորձաքննությունների պրակտիկայում հաճախ հանդիպում է տուժողի վարքի պասսիվ-ենթարկվող տիպ, երբ անձն առանց դիմադրություն ցույց տալու կատարում է բռնարարի բոլոր պահանջները, ենթարկվում նրա հրահանգներին: Այսպիսի փորձաքննվողներին բնութագրական են այնպիսի անձնային գծեր, ինչպիսիք են ներշնչվողականությունը, ենթարկվողականությունը, կասկածամտությունը, անվճռականությունը, դյուրահավատությունը, երկչոտությունը, հուզական անկայունությունը, վարքի պասսիվությունը: Սա հաճախ վառ դրսևորվում է այն երեխաների մոտ, ում ծնողները երեխայից պահանջում են բացարձակ ենթարկում, շեշտը դնում են ոչ թե երեխայի՝ պահանջի հասկացման, այլ անվերապահ կատարման վրա: Հետագայում այդ երեխաները, ինքնուրույն որոշումներ կայացնելու հմտություններ չունենալով, չեն կարողանում նոր փոփոխվող իրավիճակում արագ որոշում կայացնել և արդյունքում կյանքի ճգնաժամային իրավիճակում դառնում են անօգնական: Այդ պատճառով այս գործերով դատաքննությանը տրամադրվելիք նյութերի նախապատրաստման ընթացքում անհրաժեշտ է նաև առանձնակի ուշադրություն դարձնել փորձաքննվողի կյանքի վերաբերյալ փաստերի հավաքմանը, որոնք անհրաժեշտ են նրա հոգեբանական առանձնահատկությունների բացահայտման համար: Հատուկ նշանակություն ունեն տվյալները, որոնք վերաբերում են անձի զարգացման և դաստիարակման պայմաններին, տուժողի ծնողների փոխհարաբերություններին, կենցաղային պայմաններին և եղբայրների ու քույրերի հետ հարաբերություններին:

Ա.Ա.-ն դեպքի պահին 15 տարեկան է եղել, սովորել է միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանում գերազանց առաջադիմությամբ, ունեցել է կրտսեր եղբայր, ծնողները բարձրագույն կրթություն են ունեցել, աշխատել են իրենց մասնագիտությամբ. ընտանիքը սոցիալ-տնտեսապես ապահովված է եղել: Փորձագիտական գրույցի ընթացքում Ա.Ա.-ի մայրը նշում է, որ ինքն ու ամուսինը իրենց երեխաներին նյութապես լիովին ապահովել են, նրանց համար բարենպաստ ընտանեկան մթնոլորտ են ստեղծել, փորձել են զերծ պահել ամեն տեսակ խնդիրներից, ապահովել նրանց երջանիկ մանկու-

թյունը: Երեխաներին երբևէ չեն տեղեկացրել իրենց խնդիրների, հոգսերի մասին, միևնույն ժամանակ նրանցից պահանջել են անվերապահ ենթարկում: Ա.Ա.-ի մայրը դպրոցում մանկավարժ է աշխատել և խիստ վերահսկել է դրսևորվողի վարքը, շփումները, մշտապես ուղեկցել է նրան: Ա.Ա.-ն սեռական հարաբերությունների, մասնավորապես՝ սեռական փոխհարաբերության էության, դրա արտահայտման ձևերի, սեքսուալ հարաբերությունների ֆիզիոլոգիական կողմերի, մանկածնության, սեռավարակների մասին ունեցել է բավարար գիտելիքներ: Երբ Ա.Ա.-ն առաջին անգամ միայնակ դուրս է եկել տանից դպրոց գնալու նպատակով (մայրը վատառողջ է եղել և չի գնացել աշխատանքի), վերադարձի ճանապարհին սկսել է անձրև տեղալ. մի ավտոմեքենա է կանգնել, մոտ 40-45 տարեկան անծանոթ տղամարդ առաջարկել է Ա.Ա.-ին տուն տանել, վերջինս համաձայնել է, նստել է ավտոմեքենան, ասել է բնակության վայրը: Տղամարդը սկսել է նրա մասին տարբեր հարցեր տալ, ապա Ա.Ա.-ն նկատել է, որ տան ուղղությամբ չեն գնում. այդ մասին հայտնել է տղամարդուն, սակայն վերջինս Ա.Ա.-ին ասել է, որ կարճ ճանապարհով են գնում: Թեքվել է ամառային տարածք, կանգնեցրել է ավտոմեքենան, իջել է վարորդի նստատեղից, նստել հետևի նստատեղին՝ Ա.Ա.-ի կողքին, վերջինիս ասել, որ հանի հագուստները: Ա.Ա.-ն վախեցել է, փորձել է դիմադրել, սակայն տղամարդը վախեցրել է, ասել է, որ արդեն տեղյակ է նրա ընտանիքի անդամների մասին, եթե նա փորձի դիմադրել, նրանց կվնասի, որից հետո Ա.Ա.-ն դադարել է դիմադրության փորձեր կատարել: Տղամարդը սեռական հարաբերություն է ունեցել Ա.Ա.-ի հետ: Վերջինիս, ինչպես նաև այդ տղամարդու վրա վնասվածքներ չեն հայտնաբերվել, Ա.Ա.-ի հագուստները պատռված չեն եղել: Փորձագիտական գրույցի ընթացքում Ա.Ա.-ն նշում էր, որ երբ տեսել է, որ դեկին մեծ տարիքով անձնավորություն է, նրա կողմից իր անձին ուղղված սպառնալիք չի զգացել: Տղամարդու նպատակի մասին միայն կռահել է, երբ վերջինս իրեն ասել է, որ հանի հագուստները: Մինչ այդ չի մտածել, որ այդ տարիքի տղամարդը կարող է այդպիսի մտքեր ու ցանկություններ ունենալ իր հանդեպ, իսկ այդ տղամարդու՝ իր ընտանիքի անդամներին վնասելու սպառնալիքը իրական է համարել, ուժգին վախեցել է և իրեն անգոր է զգացել այդ իրավիճակը որևէ կերպ փոխել: Հոգեբանական փորձարարական հետազոտության արդյունքներով Ա.Ա.-ի մոտ բացահայտվել են այնպիսի անհատական հոգեբանական առանձնահատկություններ, ինչպիսիք են զգայունությունը, ներշնչվողականությունը, երկչո-

www.journal.lawinstitute.am

տությունը, տազնապայմանության բարձր մակարդակը, իսկ ռետրոսպեկտիվ հետազոտության արդյունքները փաստում էին, որ Ա.Ա.-ի մոտ դեպքի պահին գերակայել են վախը, լարվածությունը, ֆրոստրացիան, տազնապայմանությունը, անօգնականության զգացումը: Հաշի առնելով այս բոլոր փաստերը, դրանք համադրելով միմյանց հետ՝ հոգեբան-փորձագետը եկել է այն հետևության, որ չնայած նրան, որ Ա.Ա.-ն բավարար տեղեկացված է եղել սեռական հարցերին, հասկացել է դրա բնույթն ու նշանակությունը, սակայն ելնելով նրա դաստիարակության ոճից, անձնային առանձնահատկություններից և դեպքի պահին հոգեվիճակից՝ Ա.Ա.-ն դեպքի պահին զրկված է եղել դիմադրություն ցույց տալու կարողությունից:

Դատահոգեբանական փորձաքննության ժամանակ շատ կարևոր է ուսումնասիրել հանցավոր իրավիճակը, որում հայտնվել է տուժողը: Հաճախ են պատահում դեպքեր, երբ որպես բռնարար հանդես է գալիս երեխայի ընտանիքի անդամը կամ ընտանիքի հետ ազգակցական մոտ կապի մեջ գտնվող անձը, ով մշտական շփում է ունենում, հնարավոր է՝ հեղինակություն և վստահություն է վայելում տուժողի մոտ, և վերջինս սեռական անձեռնմխելիության դեմ սպառնալիք չի զգում: Հանցավոր արարքի հանկարծակիությունը, անձի պատվի և արժանապատվության դեմ ոտնձգությունը կարող են հանդիսանալ հոգետրավմատիկ գործոն՝ առաջացնելով գիտակցության մասնակի նեղացում և վարքի լիարժեք կամային կարգավորման կամալուծում: Տուժողի մոտ առաջանում է ըմբռնման պատրանքայնություն, կտրուկ իջնում են տեղի ունեցածի ընկալման հնարավորությունը, սեփական արարքների և հանցագործի վարքի իմաստի գի-

տակցումը, որոնք հանգեցնում են սեռական բռնության բնույթն ու նշանակությունը հասկանալու անկարողությանը: Այդ պատճառով այս գործերով փորձաքննություն իրականացնելիս շատ կարևոր է նաև ռետրոսպեկտիվ վերլուծության ենթարկել անչափահասի հոգեվիճակը՝ դեպքից առաջ, ընթացքում և հետո նրա հուզական ռեակցիաների ուսումնասիրությունը:

Այսպիսով, ամփոփելով՝ կարող ենք ասել, որ անչափահասների սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ հանցագործությունների կանխարգելման, պատճառների վերհանման, բացահայտման և դրա դեմ պայքարի կարևորագույն օղակ է հանդիսանում դատահոգեբանական փորձաքննությունը, որի հիմնական խնդիրն է սեռական բռնության ենթարկված անչափահասի՝ դիմադրություն ցույց տալու կարողության ուսումնասիրությունն ու բացահայտումը: Իր առջև դրված խնդիրը բացահայտելու համար հոգեբան-փորձագետը պետք է հավասարապես ուսումնասիրի տուժողի կողմից իր նկատմամբ կատարվող գործողությունների բնույթն ու նշանակությունը հասկանալու կարողությունը, նրա անձնային և տարիքային առանձնահատկությունները, դաստիարակության պայմանները և հետազոտվող իրավիճակում տուժողի հոգեվիճակը: Միայն այս բոլոր գործոնների ամբողջական վերլուծությունն է հնարավորություն տալիս փորձագետին փատասխանել այն հարցին, թե անչափահասը զրկվա՞ծ է եղել դիմադրություն ցույց տալու կարողությունից, թե՞ ոչ:

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք (ընդունված է 2003 թվականի ապրիլի 18-ին):

² Տե՛ս Нагаев В.В. Основы судебно-психологической экспертизы: -М.: ЮНИТИ-ДАНА, Закон и право, 2000.

³ Տե՛ս Нагаев В.В. Основы судебно-психологической экспертизы: -М.: ЮНИТИ-ДАНА, Закон и право, 2000.

⁴ Տե՛ս Нагаев В.В. Основы судебно-психологической экспертизы: -М.: ЮНИТИ-ДАНА, Закон и право, 2000.

⁵ Տե՛ս Догадина М. А. Социальная и судебная психиатрия: история и современность / М. А. Догадина, Т. А. Смирнова. -М. : Прогресс, 1996. -168 с.

⁶ Տե՛ս Кудрявцев А. И. Комплексная судебная психолого-психиатрическая экспертиза способности малолетних несовершеннолетних давать показания / Кудрявцев И. А., Морозова М.В. -М. : Юрид. лит, 1996. – 224 с.

⁷ Տե՛ս Шипшин С.С. Ретроспективная диагностика психического состояния в судебно-психологической экспертизе: Методическое пособие.- Ростов н/Д., 2000.

Օգտագործված գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք (ընդունված է 2003 թվականի ապրիլի 18-ին):
2. Догадина М. А. Социальная и судебная психиатрия: история и современность /Догадина М. А., Смирнова Т. А. -М. : Прогресс,1996. С.168.
3. Кон Н. С. Психология ранней юности. М., 1980.
4. Кудрявцев А. И. Комплексная судебная психолого-психиатрическая экспертиза способности малолетних несовершеннолетних давать показания / Кудрявцев И. А., Морозова М.В. - М. : Юрид. лит, 1996. С. 224.
5. Мадорцкий Л.П., Зак А.З. Глазами подростков. М. 1991, С. 56.
6. Нагаев В.В. Основы судебно-психологической экспертизы: -М.: ЮНИТИ-ДАНА, Закон и право, 2000
7. Сафуанов Ф.С. Судебно-психологическая экспертиза в уголовном процессе.- М.:1998.
8. Ткаченко А.А., Яковлева Е.Ю. Комплексная сексолого-психиатрическая экспертиза “беспомощного состояния” потерпевших-жертв сексуальных правонарушений: Методические рекомендации.- М., ФГУ “ГНЦ ССП Росздрава”, 2008, С. 44.
9. Шишкин С.С. Ретроспективная диагностика психического состояния в судебно-психологической экспертизе: Методическое пособие.- Ростов н/Д., 2000.
10. Личко А.Е. Эти трудные подростки, записи психиатра. М., 1989.

Շովինար Թադեոսյան
 Эксперт отдела психологических экспертиз
 ГНКО “Национальное Бюро Экспертиз” НАН РА

ՔԵԶԻՕՄԵ

Особенности судебно-психологической экспертизы подростков, подвергшихся сексуальному насилию

В данной научной статье затрагивается актуальность борьбы против сексуального насилия в отношении несовершеннолетних, особенности судебно-психологической экспертизы по этим делам, ее значение с правовой точки зрения, затрагивается правовое определение “непомощного состояния”, обсуждаются пределы полномочий эксперта психолога. После чего затрагиваются составные оказания противостояния – важной с точки зрения психологии способности, проанализированы уровни понятия характера и значения сексуального действия, формы проявления, связанные с возрастными особенностями. Также затрагиваются индивидуальные психологические особенности подвергшихся насилию несовершеннолетних, проблемы воспитания, был приведен пример из практики судебно-психологической экспертизы.

Ключевые слова: судебно-психологическая экспертиза, сексуальное насилие, несовершеннолетние, беспомощное состояние, способность оказания противостояния, способность понятия характера и значения происшедшего.

Tsovinar Tadevosyan
 Expert of the Department of Psychological Expertise of
 “National Bureau of Expertise” SNCO of NAS of RA

SUMMARY

Peculiarities of forensic-psychological expertise of teenagers, subjected to sexual violence

In the present Article we touch upon the relevancy of the struggle against sexual violence regarding minors, peculiarities of forensic-psychological expertise on such cases, its importance from the legal point of view, legal definition of “helpless state” is involved, limits of the competence of an expert psychologist are discussed. Whereupon, we touch upon the components of resistance – important ability from the point of view of psychology, have analyzed the levels of the concept of nature and importance of sexual desire, forms of its demonstration, related to the age peculiarities.

We also touch upon the individual psychological peculiarities of the minor, subjected to violence, problems of their education, an example from the forensic-psychological expertise practice was brought.

Keywords: forensic-psychological expertise, sexual violence, minor, helpless state, ability of making resistance, ability of understanding the nature and importance of the event.